BSC BUSINESS SUPPORT CENTER

DigiSupport

CIPE CENTER FOR INTERNATIONAL PRIVATE ENTERPRISE

ԲԻԶՆԵՍ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

www.bsc.am

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ ընթերցող,

Սույն ուղեցույցը կազմվել է «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի (BSC) կողմից Միջազգային Մասնավոր Ձեռնարկատիրության Կենտրոնի (CIPE) աջակցությամբ իրականացվող «Թվային տնտեսության օրակարգի ձևավորում Հայաստանում» ծրագրի շրջանակներում՝ հայաստանյան միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ-ների) համար:

Ծրագրի շրջանակներում մշակված ուղեցույցներն են՝

- Բիզնեսի թվային փոխակերպման ռազմավարության ուղեցույց
- Բիզնես գործընթացների թվայնացման գործիքներ
- Ձեր բիզնեսը թվային հարթակներում
- Առցանց վաճառքի հարթակներ
- Բիզնեսի թվային անվտանգության ուղեցույց

Վերոնշյալ 5 ուղեցույցները ամբողջությամբ մշակվել են հայերենով, հասանելի են www.bsc.am կայքում և սոցիալական էջերում անվճար օգտագործման համար:

Թվայնացման ծրագրի շրջանակներում իրականացված նախաձեռնություններին կարող եք ծանոթանալ այս հղումով՝ https://bsc.am/hy/digital-economy-in-armenia/

Ուշադրություն. խնդրում ենք հաշվի առնել, որ ուղեցույցում ներկայացված է 2023թ. օգոստոսի դրությամբ տեղեկատվություն, որը, հնարավոր է, ենթարկված լինի հետագա փոփոխությունների:

www.bsc.am

Երևան, 2023թ.

DigiSupport

Թվային գործիքներ ՄՓՄՁ-ների համար

Հարթակի անվանումներին սեղմելով կարող եք տեսնել ինչպես անվճար, այնպես էլ վճարովի փաթեթների շրջանակում հասանելի ծառայությունների ցանկը:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐԹԱԿ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Slack	Slack-ը հաղորդակցման հարթակ է, որը հնարավորություն է տալիս էլ. փոստի միջոցով գրանցվելու հարթակում, հաղորդակցվելու թիմի մնացած անդամների հետ, ուղարկելու փաստաթղթեր, վիդեոհոլովակներ: Slack-ը արդյունավետ կերպով կապվում է այլ հարթակների հետ, ինչպիսիք են, օրինակ, Google-ը, Zoom-ը, ինչը թույլ է տալիս աշխատանքային հաղորդակցությունը իրականացնել մեկ վայրում:
Discord	Discord-ը աշխատանքային ներքին հաղորդակցման հարթակ է, որը թույլ է տալիս ուղարկել մի շարք փաստաթղթեր, նկարներ, տեսահոլովակներ, կազմակերպել տեսազանգեր, սերվերում իրականացնել ալիքների/խմբերի բաժանում՝ ըստ ստորաբաժանումների:
Microsoft Teams	Microsoft Teams-ը բիզնես հաղորդակցման հարթակ է, որը, ինչպես նախորդ երկու հարթակները, թույլ է տալիս ապահովել թիմի ներքին հաղորդակցությունը, կազմակերպել տեսազանգեր և վիդեոկոնֆերանսներ:

DigiSupport

ԹԻՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀԱՐԹԱԿ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Trello	Trello-ն նախագծերի կառավարման գործիք է, որը թույլ է տալիս պլանավորել աշխատանքը, իրականացնել առաջադրանքների բաշխում աշխատակիցների միջև և հետևել աշխատանքի կատարմանը:
monday.com	monday.com-ը տալիս է մի շարք հնարավորություններ բիզնեսներին: Հարթակի միջոցով հնարավոր է իրականացնել աշխատանքի պլանավորում, հսկողություն: Հարթակը տրամադրում է մի շարք փաստաթղթերի ձևանմուշներ, որոնք պարզեցնում և արագացնում են աշխատանքը:
Jira	Jira-ն ևս նախագծերի և թիմի կառավարման գործիք է, որը նախատեսված է համեմատաբար առավել բարդ գործընթացներ ունեցող կազմակերպությունների համար:
Microsoft Project	Microsoft Project-ը նախագծերի կառավարման գործիք է, որի միջոցով հնարավոր է ըստ ժամանակացույցի իրականացնել աշխատանքների, ռեսուրսների պլանավորում և աշխատանքի կատարման անընդհատ մոնիթորինգ: Հարթակի միջոցով հնարավոր է պարբերաբար արտահանել հաշվետվություններ աշխատանքի կատարման ընթացքի և արդյունքների մասին:

DigiSupport

ՏԵՍԱԶԱՆԳԵՐ

ՀԱՐԹԱԿ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Google meet	Նշված հարթակները թույլ են տալիս կազմակերպել տեսազանգեր, վիդեոկոնֆերանսներ, վեբինարներ ինչպես թիմի ներսում, այնպես էլ թիմից դուրս՝ հաճախորդների, գործընկերների մասնակցությամբ:
Zoom	
Microsoft Teams	
Krisp	Krisp-ը արհեստական բանականության վրա հիմնված աուդիո մշակման ծրագրային լուծում է, որը հնարավորություն է տալիս լռեցնելու «կողքի» աղմուկը տեսազանգերի ժամանակ և իրականացնելու դրանք առավել պրոֆեսիոնալ միջավայրում:

ԱՌՑԱՆՑ ՕՐԱՑՈՒՅՑՆԵՐ

ՀԱՐԹԱԿ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Google Calendar	Google Calendar-ը ժամանակի կառավարման և պլանավորման օրացուցային գործիք է, ինչը հնարավորություն է տալիս պլանավորել առցանց և առկա ձևաչափով հանդիպումներ, միջոցառումներ:
Calendly	Calendly-ի միջոցով հնարավոր է սահմանել յուրաքանչյուր աշխատակցի գրաֆիկը և հղման միջոցով ամրագրել հանդիպում աշխատակիցների կամ գործընկերների հետ: Սա ինտեգրված է Gmail-ին և Google Calendar-ին, ինչի միջոցով հանդիպումների կազմակերպման գործընթացը դառնում է առավել արագ:

DigiSupport

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐԹԱԿ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Mailchimp	Mailchimp-ը e-mail մարքեթինգի արդյունավետ գործիք է: Ծրագիրը հնարավորություն է տալիս ուղարկելու ընկերության գովազդային նյութերը, առաջարկները ընկերության մեծ քանակով հաճախորդների էլեկտրոնային հասցեներին արագ և ավտոմատացված կերպով:
Brevo	Brevo-ն հնարավորություն է տալիս նախագծելու և իրականացնելու գովազդային արշավներ էլ. փոստի միջոցով: Հարթակի միջոցով հնարավոր է վերահսկել կոնտակտային տվյալների բազաները, հստակեցնել թիրախային լսարանը և վերահսկել գովազդային արշավների արդյունավետությունը:
Freshmarketer	Freshmarketer-ը առաջարկում է վաճառքների և մարքեթինգային արշավների ավտոմատացման գործիքներ, այդ թվում նաև էլ. փոստի միջոցով իրականացվող գովազդային արշավների:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

ՀԱՐԹԱԿ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Google Forms	Google Forms-ը առցանց հարցումների անվճար գործիք է, որը տրամադրվում է Google-ի կողմից: Սա թույլ է տալիս հեշտությամբ ստեղծել և տարածել հարցումներ՝ առցանց տեղեկատվություն հավաքելու համար:
SurveyMonkey	SurveyMonkey-ն առցանց հարցման հարթակ է, որը թույլ է տալիս անհատներին և կազմակերպություններին ստեղծել և տարածել հարցումներ՝ նպատակային լսարանից հետադարձ կապ, կարծիքներ և տվյալներ հավաքելու համար:
KoboToolbox	KoboToolbox-ը ծրագիր է, որն օգտագործվում է հարցումների, մոնիթորինգի, գնահատման և հետազոտությունների համար:

DigiSupport

ԿԱՅՔԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԱՐԹԱԿ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Shopify	Նշված հարթակների միջոցով ընկերությունները հնարավորություն ունեն անվճար պատրաստելու կայքեր՝ ապրանքների/ծառայությունների ներկայացման և վաճառքի համար: Նշված հարթակները թույլ են տալիս պատրաստել կայքեր՝ առանց ծրագրավորման գիտելիքներ ունենալու:
Softr	
Wix.com	
Wordpress	

ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐԹԱԿ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Google Workspace	Google Workspace-ն առաջարկում է մի շարք գործիքներ ընկերությունների գործունեության ապահովման համար: Հարթակում հնարավոր է ստեղծել աշխատանքային տարատեսակ փաստաթղթեր, պահպանել դրանք, «կիսվել» գործընկերների և ընկերների հետ: Գործիքները անմիջապես կապված են Gmail էլ. փոստին, ինչը հեշտացնում է փաստաթղթերի տարածումը և հաղորդակցումը գործընկերների միջև:
Microsoft Office	Microsoft Office-ը հնարավորություն է տալիս ստեղծելու մի շարք փաստաթղթեր, աղյուսակներ, ներկայացումներ: Առավել հաճախ օգտագործվող ծրագրերն են Microsoft Word, Microsoft Excel, Microsoft Powerpoint ծրագրերը:
OneDrive	OneDrive-ը թույլ է տալիս ինչպես պահպանել ծավալով մեծ փաստաթղթերը, այնպես էլ դրանցով «կիսվել» գործընկերների և թիմակիցների հետ:
WeTransfer	WeTransfer-ը կազմակերպության փաստաթղթերն ուղարկելու պարզ գործիք է: Սա թույլ է տալիս «կիսվել» ծավալով մեծ փաստաթղթերով, լուսանկարներով և տեսանյութերով:

CRM[1] ԳՈՐԾԻՔՆԵՐ

ՀԱՐԹԱԿ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Airtable	Airtable-ն առցանց հարթակ է տվյալների բազաների ստեղծման և դրանց փոխանակման համար: Կայքի արտաքին տեսքը պարզ է, հարմար: Կայքը թույլ է տալիս յուրաքանչյուրին հեշտությամբ աշխատել տվյալների բազաների հետ:
Zoho	Zoho-ն գործում է որպես մեկ պահոց՝ ընկերության վաճառքների, մարքեթինգի և հաճախորդների հետ կապի պահպանումը միավորելու և վաճառքի գործընթացը պարզեցնելու համար:
Bitrix24	Bitrix24-ը համապարփակ գործիք է գործընթացների կառավարման, համագործակցության և հաղորդակցության պահպանման համար: Bitrix24-ը տալիս է միասնական հարթակ փաստաթղթերի, նախագծերի, հաղորդագրությունների, առաջադրանքների և հաճախորդների կոնտակտների համար: Հարթակից օգտվելը թույլ է տալիս վաճառքի գործընթացը դարձնել առավել արագ և արդյունավետ:
Armsoft	Armsoft-ը խոշոր, միջին և փոքր մատակարար ընկերությունների վաճառքի գործընթացի ավտոմատացման համալիր ծրագիր է: Սա հնարավորություն է տալիս արդյունավետ կազմակերպելու և կառավարելու մատակարար կազմակերպությունների կողմից պատվերների հավաքագրման, վաճառքի, առաքման և ապրանքների շուկայական առաջխաղացման գործընթացները:
Mersoft	Mersoft-ի միջոցով հնարավոր է ավտոմատացնել բիզնես գործընթացները նրանց գործունեության կոնկրետ ոլորտներում: Հիմնական ուղղություններն են՝ մարդկային ռեսուրսների կառավարում, հաճախորդների հետ հարաբերությունների կառավարում, պահեստի և առևտրի կառավարում (բաշխում,

[1] Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման (CRM) գործիքները հնարավորություն են տալիս կառավարել ներկայիս ու պոտենցիալ հաճախորդների հետ հարաբերությունները և նրանց ներգրավման գործընթացը:

	արտադրություն), ֆինանսական կառավարում, բիզնես գործընթացների օպտիմալացում:
HubSpot	HubSpot-ը ևս վաճառքի ողջ շղթայի ավտոմատացման և վաճառքները առավել արդյունավետ դարձնելու համալիր CRM համակարգ է:
monday sales CRM	Monday.com-ը վաճառքի CRM համակարգ է, որը ընկերությանը հնարավորություն է տալիս պարզեցնել և ավտոմատացնել վաճառքի գործընթացը նախավաճառքից մինչև հետվաճառք:

DigiSupport

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ
ՀՀ, 0002, Երևան, Եկմալյան փողոց 6
+374 10 57 47 78 | +374 77 57 47 78
bsc@bsc.am | www.bsc.am